ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

VI

ՀԱՂՈՐԴՈՒՄ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-238

Հռիփսիմե Ասատրյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ, գիտաշխատող

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Վերջին ժամանակներում (20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին) համաշխարհայնացման թեման ամենաարդիականներից և քննարկվողներից է ամբողջ աշխարհում: Հայտնի է, որ այն իր ազդեցությունն է թողնում նաև ժողովրդական մշակույթի տարբեր դրսևորումների, այդ թվում՝ բանահյուսության վրա:

Մեր խնդիրն է՝ ՀՀ Արարատի մարզի որոշ բնակավայրերում և Երևանում դաշտային-ազգագրական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա ներկայացնել համաշխարհայնացման հետևանքով քաղաքական, սոցիալ-մշակութային երևույթների դրսևորումները մանկական բանահյուսության վրա:

Հոդվածում ամփոփված նյութը գրի ենք առել 10-15 տարեկան երեխաներից 2013-ին՝ Երևան քաղաքի Շենգավիթ, Արաբկիր և Նոր Նորք վարչական շրջաններում, 2022-ին՝ Արարատի մարզի Մասիս քաղաքում, և 2023-ին՝ Արարատի մարզի Մխչյան և Ազատավան համայնքներում:

Հետազոտությունը կատարվել է դիտման և մասնակցային հետազոտության մեթոդներով:

Հիմնաբառեր՝ համաշխարհայնացում, խաղ, մանկական բանահյուսություն, հաշվերգ, անեկդոտ, զվարճախոսություն, քաղաքական գործընթացներ:

Ներածություն

Մանկական բանավոր ժառանգության փոփոխման վրա ազդող գործոններից են հանրային կյանքի համընդհանուր փոփոխությունները, հանրահայտ մարդկանց կյանքից վերցված միջադեպերը, կրոնական և քաղաքական բնույթի՝ իրական ժամանակում և համացանցային տիրույթում տեղի ունեցող պատերազմները ևն:

Ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ ամբողջ աշխարհում համաշխարհայնացման գործընթացներն անմիջական ազդեցություն ունեն ինչպես միջանձնային և սոցիալական հարաբերությունների, այնպես էլ տեղական երևույթների դրսևորման ձևերի վրա: Դրանց մի մասը կարող է ունենալ խիստ տեղայնացված բնույթ (անուղղակի ներազդված), մյուս մասը՝ համընդհանուր (ուղղակիորեն ներազդված), սակայն բոլոր դեպքերում էլ *գլոբալ* իմաստով արտահայտում են համընդհանուր վերաբերմունք այս կամ այն անձի, երևույթի, պաշտոնյայի, որևէ տնտեսական, մշակութային և այլ իրադարձության նկատմամբ:

Օրինակ՝ Հայաստանի հետ արտաքին քաղաքական առումով կապ ունեցող այնպիսի կերպարների ընկալումն ու անունների «շահարկումը» (ոչ միայն

հայ հանրության, այլև երեխաների կողմից), ինչպիսիք են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կամ ԱՄՆ նախկին նախագահներ Բարաք Օբաման, Դոնալդ Թրամփը, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և այլք, վկայում են միջազգային հարաբերություններում սեփական հանրության համաշխարհային գործընթացներում համարկման հոգևոր և ֆիզիկական ներկայության սոցիալ-հոգեբանական կողմերի մասին[1]:

Համաշխարհային հարթակում պարտադրված պատերազմներն ու ժողովուրդների գաղութացման կամ ստրկացման պատմությունները չափազանց շատ են, և բոլորն էլ ընթանում են մի ուղեծրով՝ որպես քաղաքական, տնտեսական, մշակութային, էկոլոգիական, տեխնիկական, կրոնական, կրթական և այլ հայեցակետեր ներառող համընդգրկուն գործընթաց:

Տեղեկատվական ու համակարգչային տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես ընդունված է համարել, արդյո՞ք իրապես մոտեցնում է տարբեր ժողովուրդների և ազգերի մարդկանց՝ դրանով հետզհետե նեղացնելով պետությունների միջև իրական սահմանները, և դրանք, ըստ էության, դարձնելով «հոգևոր»[2]: Կամ, արդյո՞ք «մոլորակային մասշտաբներ» հասկացությունը, որ առաջ է քաշում Ն. Իվանովը, իրապես կարող է ազդել այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են տնտեսությունը, քաղաքականությունը և հանրային կյանքը[3]: Սակայն թե ի՞նչ հնարավոր հետևանքներ կարող է ունենալ համաշխարհայնացումը անձի ու հանրության վրա՝ հատկապես հոգևոր-բարոյական ու ազգային արժեքների տեսանկյունից, կամ ի՞նչ է ամբողջովին համաշխարհայնացված հանրությունը, և ապագայում այն ի՞նչ հետևանքներ կունենա աշխարհի վրա,- ցույց կտա ժամանակը:

Համաշխարհայնացումը և սոցիալականացումը

Հայաստանում 21-րդ դարում մշակութային համաշխարհայնացման գործընթացի համար հանրայնացնող կենսունակ օրինակ են համացանցային ֆորումները, բլոգները[4], առանձին օգտատերերի էջերը, որոնցում քննարկվում են ամենատարբեր բնույթի թեմաներ՝ միտված սոցիալական հարաբերությունների ամրապնդմանը, համաշխարհային արժեքների տարածմանը, միասնական նորմերի կամ գիտելիքների ձևավորմանը ևն:

---

1 Թե՛ համացանցում, թե՛ իրական կյանքում բազմաթիվ են քաղաքական թեմայով զվարճաբանություններն ու անեկդոտները: Հատկապես շատ են հայը-թուրքը-վրացին կամ ռուսը-թուրքը-վրացին բանաձևումներով անեկդոտները, որոնցում դևին հիմարացնողը, խաբողը, բոլորից հնարամիտը հայն է:

2 Հմմտ. Շաբունց 2011, 77:

3 Иванов 2004, 19.

4 Հմմտ. «Դար» ակումբ, https://www.akumb.am/forum.php?, դիտումը՝ 23.06.2023;
Մշակութային գլոբալացում և մշակութային ինքնություն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=3833, դիտումը՝ 23.06.2023;
Կրոնական անեկդոտներ, «Դար» ակումբ, https://www.akumb.am/showthread.php/55970, դիտումը՝ 23.06.2023:

Դիտարկելով այդ ֆորումները և համադրելով մեր դաշտային նյութը՝ նկատել ենք ավանդական մշակույթի փոխակերպումներ հայաստանյան իրականության՝ մասնավորապես մանկական բանահյուսության մեջ: Ակնհայտ է, որ այսօր հանրային կամ անհատական կյանքին առնչվող որևէ լուրջ կամ ժամանցային-զվարճական մանկական թեմա անխտիր բախվում է համաշխարհայնացման խնդիրներին, քանի որ դրանք ամենուր են՝ քաղաքականության, տնտեսության, հոգևոր, արվեստի, կենցաղի և այլ ոլորտներում, որտեղ գործընթացներն ավելի շատ են բնութագրում ներկա սոցիալ-մշակութային կյանքը, մինչև անգամ տոնական կենցաղը, որում անհատը, ապա նաև՝ երեխան, լսում, տեսնում, սովորում ու կիրառում, ի վերջո՝ համաշխարհայնանում է: Հենց այդ գործընթացներն են սահուն կերպով մտնում մշակութային կյանք, այնտեղից էլ՝ առտնին կենցաղ ու խաղային միջավայր:

Եւ որքան էլ համաշխարհայնացման մասին խոսելիս՝ քաղաքական տեսաբաններն ու դիվանագետներն ավելի շատ նշում են այդ գործընթացների առարկայական պատճառները, քան՝ մարդկային, հոգեբանական կամ հոգևոր, միևնույն է՝ հանրային-քաղաքական կյանքում ոչինչ տեղի չի ունենում առանց մարդու մասնակցության, և այդ զարգացումներում մարդկային հակումների ու մղումների բնույթը և ձգտումների ուղղվածությունը որոշիչ դեր են կատարում անձի հոգեբանության վրա:

Այս զարգացումներին համընթաց՝ այսօր ՀՀ Արարատի մարզի որոշ գյուղերում, Մասիսում և Երևանի որոշ շրջաններում կենցաղավարող մանկական հաշվերգերն ու խաղերը ձեռք են բերել սոցիալական, զվարճական, կրոնական, քաղաքական ուղղվածություն:

Հաշվերգեր

Բը՛զ, բը՛զ, բըզ-բըզան,
Բզեզն եկավ տըզ-տզան,
Եկավ-ընկավ թակարդը,
Նրան բռնեց Սարդ-Մարդը:

Ալա-բալա-նիցա,
Ալան-թալանից ա,
Սամվել-Մանվել՝ թալան-չո՛,
Սերժիկ-Սաշիկ՝ բաղ-ման-չո՛[5]*:*

Չելա-վեկ պա-ուկ (человек-Паук),
Պատի տակին տափկենուկ (թաքնվել է),
Հենց որ բացվեց սեյֆերը (сейф),
Վերցրեց, թռավ փողերը[6]*:*

5 Բանասաց՝ Մաթևոսյան Հայրապետ Ալբերտի, ծնվ. 2014 թ. Արտաշատում, գրի ենք առել 2023 թ. հունիսին, գ. Ազատավան (Արարատի մարզ):

6 Բանասաց՝ Հովսեփյան Նորայր Արտյոմի, ծնվ. 2012 թ. Երևանում, գրի ենք առել 2023 թ. մայիսին Շենգավիթ վարչական շրջանում (Երևան):

Ոչ-նյութական մշակութային ժառանգության բանահյուսական նմուշները բազմաժանր են ու տարասեռ, և երեխաների բառամթերքում դրանք կենցաղավարում են տարբեր ձևերով ու ամենատարբեր տարիքային խմբերում: Խոսքը անեկդոտների և զվարճախոսությունների մասին է, որոնք թեև այնքան էլ չեն համապատասխանում մեր հոդվածում առաջ քաշած խնդիրներին, սակայն ակնհայտ է, որ միմյանց կապող ընդհանուր թելը ժամանակակից հայ երեխայի մշակութային կյանքի նորօրյա զարգացումների ընկալումն ու ինքնատիպ դրսևորումն են՝ ազատ, անկաշկանդ և քաղաքականացված:

Անեկդոտը երեխայի կենցաղում

— Պապ, ո՞վ է փղամարդը:
— Ուժեղ մարդ է, որ սիրում և պաշտպանում է իր ընտանիքը:
— Ես ուզում եմ դառնալ փղամարդ, ինչպես մաման:

Հանդիպում են երևանցին ու ղարաբաղցին: Ղարաբաղցին հարցնում է.
— Ո՞նց ես:
Երևանցին պատասխանում է (տխուր).
— Ոնց ասես[7]:

Կամ՝
Ապարանցու փղեն գնում ա բանակ, զոհվում ա, հերն ասում ա.
— Լավա, փղես բանակից ազատվեց[8]:

Զվարճախոսություններ

Հանդես գալով իբրև լրագրող, փայտի կտորը ձևացնելով իբրև բարձրախոս՝ երեխաներն ասում են.

— Իլհամ Ալիև... ծնվել է 1959 թվականին, մահացել է 2023 թվականին՝ խուր արածելուց. խուրը մնացել է կոկորդում[9]:

— Գնա՛, արի՛, ծրար տուր,
Էրկու մատով ձեռս տուր.
Համ շոկոլադ, համ իրիս,
Թոնես, նստես ծնկներիս[10]:

Մեր գրառած և մեջբերած մյուս օրինակները բավարար են՝ ցույց տալու համար կենցաղում դրանց զարգացման ու տարածման առանձնահատկությունները՝ կապված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ սոցիալ-տնտեսական,

7 Բանասաց՝ Կարախանյան Մարի Նիկոլայի, ծնվ. 2012 թ. Երևանում, գրի ենք առել 2023 թ. մայիսին Արաբկիր վարչական շրջանում (Երևան):

8 Բանասաց՝ Սայադյան Հովհաննես Էդգարի, ծնվ. 2013 թ. Արտաշատում, գրի ենք առել 2023 թ. հունիսին, գ. Մխչյան (Արարատի մարզ):

9 Բանասաց՝ Պետրոսյան Վահե Հայկի, ծնվ. 2010 թ. ք.Մասիսում, գրի ենք առել 2022 թ., ք. Մասիս (Արարատի մարզ) :

10 Խմբային հարցազրույց Քր. Ալավերդյանի անվան դպրոցի բակում խաղացող մի խումբ երեխաների հետ, գ. Մխչյան (Արարատի մարզ), 2023 թ. հունիս:

սոցիալ-քաղաքական, մշակութային և այլ արտաքին ու ներքին գործոնների հետ: Այսօր հայ իրականության մեջ երեխայի առօրյան հագեցած է քաղաքականության, պատերազմի, համաճարակի, տարերային աղետների ևն-ի մասին լուրերով, որոնք նա ոչ միայն լսում ու տեսնում է հեռուստացույցով կամ համացանցում, այլև հասակակիցների հետ խոսում ու քննարկում է բակում, մանկապարտեզում կամ դպրոցում:

Թե կինն առհասարակ ինչ դերակատարություն ունի մեր հանրության մեջ՝ բոլորովին այլ խնդիր է և մեր քննման նյութից դուրս, սակայն պետք է փաստել, որ «*ես ուզում եմ դառնալ տղամարդ, ինչպես մաման*» արտահայտությունը մերօրյա հանրային հարաբերություններն արտահայտող բնութագրիչներից է, որի մեջ տեսնում ենք գենդերային հավասարությանն ուղղված ուղղակի և անուղղակի «միջոցառումներ»:

Երևանցու պատասխանը արցախցուն՝ «ոնց ասես», կամ ապարանցու բողոքը, թե արցախցիներն ինչպես են եկել ու գրավել Երևանը, վկայում է 1991 թ. Հայաստանի անկախացումից հետո ընկած 30 տարիների ընթացքում ՀՀ բարձրաստիճան պաշտոններում ԼՂՀ բնակիչների նշանակման մասին, դրա հետևանքով առաջ եկած անհանդուրժողական վերաբերմունքը արցախցիների հանդեպ, որը, քողարկվելով հումորով, դրսևորվել է անեկդոտների մեջ:

Թշնամական երկրի հանդեպ ատելությունը, աշխարհում տեղի ունեցող պատերազմները, հատկապես ՀՀ-ում 2020 թ. պատերազմը՝ ինչ-որ չափով նվազեցրել են բանակի դերը մեր հանրության մեջ, հետևաբար մարդկանց՝ բանակից ազատվելու ցանկությունները երբեմն ստանում են զավեշտալի կամ զվարճալի արտահայտչաձև: Իլհամ Ալիևի զվարճական մահը պատկերող այդ իրադարձությունը մեծ ոգևորությամբ ներկայացվում է Արարատյան դաշտավայրում, հատկապես Երևանում, Արտաշատում, Մասիսում և տարբեր գյուղերում 10-14 տարեկան տղա երեխաների շրջանում:

Անչափ հետաքրքրական է, որ կաշառակերության թեման խաղային դրսևորումներով ի հայտ է գալիս 10-16 տարեկան թե՛ աղջիկների, թե՛ տղաների շրջանում, դպրոցական միջավայրում: Տեղեկատվության բաց հասանելիության հնարավորությունը երեխային ստիպում է անդրադառնալ այնպիսի թեմաների, ինչպիսիք են ծրարով ինչ-որ բան փոխանցելը (կաշառք) և այդ ամենն իրենց տեսանկյունով ներկայացնելը՝ «*համ շոկոլադ, համ իրիս, թոնես, նապես ծնկներիս*»: Արդիական է դրամահավաքության թեման, քաղցրավենիքը ևս ներկայացվում է որպես միջնորդագին, դեռ ավելին՝ ծնկներին նստեցնելով՝ ցույց է տրվում, որ դրանից հետո «գլխների վրա տեղ ունեն»:

Քաղաքական պաշտոնյայի և գործարարի միանձնյա ընկալումը դպրոցական միջավայրում շատ սուր արձագանք է ստացել ուշխորհրդային տարիներում ձևավորված «*Ալա բալա նիցա*» հայտնի հաշվերգի տարբերակում: Թե ինչը նկատի ունեն երեխաները՝ հնչեցնելով վերջին տասնամյակների որոշ իրադարձություններ, կոնկրետ մարդկանց հետ կապված միջադեպեր ևն, առավել քան հասկանալի է. նրանք այստեղ խաղում են՝ առանց գաղտնագրված ենթատեքստի, ինչպես սովորաբար լինում է մյուս հաշվերգերի դեպքում:

Երեխաները սիրում ու կիրառում են առօրյայում մուլտֆիլմերի կամ ֆիլմերի սիրելի հերոսների, կերպարների անուններն ու գործառույթները: *Սարդ-մարդը* հայտնի է նախակրթական տարիքի երեխաներից մինչև դպրոցական տարիքի երեխաներին՝ թե՛ մուլտֆիլմերից, թե՛ ֆիլմերից: Նա երեխաների միջավայրում ներկայանում է և՛ որպես դրական կերպար՝ բզեզին ազատում է թակարդից, և՛ որպես բացասական՝ *առավ, թռավ փողերը*, և դա պատահական չէ, քանի որ կերպարն ինքը հենց այդպիսին է:

Խաղեր

ՀՀ-ում վերջին շրջանում (հատկապես Ռուս-ուկրաինական պատերազմից հետո, երբ մեծ թվով ռուսներ հաստատվեցին ՀՀ տարբեր մարզերում) մշակույթների փոխշփումը, վերջիններիս հետ ունեցած արժեհամակարգի կամ աշխարհայացքի, ավանդույթների, մինչև անգամ բարոյականության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հակասական տարբերությունները փոխազդվեցին տարբեր ձևերով՝ համաշխարհայնացման հոսանքներով տարածվող և տեղային՝ էթնիկ պատկանելությունից բխող արժեքների անհամապատասխանությամբ: Այս անհամապատասխանությունը սոցիալական կյանքում առաջ բերեց ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:

Դրականը եղել և մնում է միջմշակութային հավաքական չափորոշիչների ամրագրումն ու հաստատումը, իսկ բացասականը՝ սեփական էթնիկ դիմագծի տարրալուծումը և ավանդական տոնական կյանքի նորացվածությունը, արդիականացումը (*մոդեռնիզմ*):

ՀՀ մարզերում, օրինակ, ռուս բնակչության ավելացումը հայկական միջավայր է ներմուծել ռուսական քաղաքային կյանքին բնորոշ իրավիճակներ, որոնք մինչ այդ կամ չէին եղել, կամ էլ՝ մասնակի՝ կապված քաղաքներում ապրող ռուս ազգային փոքրամասնությունների տեղակայման հետ՝ Արտաշատում, Գյումրիում, Երևանում և այլուր:

Այժմ գյուղական միջավայրում կարելի է հանդիպել հայ մանուկների հետ խաղացող՝ քաղաքային միջավայրից եկած ռուս երեխաների, որոնց համար որքան որ անսովոր ու անբնական է հայաստանյան՝ հատկապես գյուղական միջավայրում ներգրավվելը, խաղի մեջ քաղաքական կերպարներ ներկայացնելը, նույնքան բնական ու սովորական է իրենց հետ ռուսական մշակույթը բերելն ու տեղայնացնելը:

Զորօրինակ՝ Արարատի մարզի Մխչյան համայնքում մեր գրանցած հետևյալ խաղը բնութագրում է համաշխարհայնացման հետևանքները: Խաղի անունը «Московская станция»[11] է: Խաղում են 10-14 տարեկան հայ և ռուս տղա երեխաները: Նախ հայ երեխաներից մեկը (առավել ճարպիկը) սկսում է հաշվել ռուսերեն տեքստով.

11 Խմբային հարցազրույց Քր. Ալավերդյանի անվան դպրոցի բակում խաղացող մի խումբ երեխաների հետ, գ. Մխչյան (Արարատի մարզ), 2023 թ. հունիս:

Белка прыгала, скакала,
И на ветку не попала,
А попала в Красный дом,
Где сидели за столом:
Ленин, Сталин…ну и блин…(կամ՝ Սերժին քաշին… ну и блин…)
Путин-король (Никол- король),
Король с королевой.
Сапожник - портной,
Кем ты хочешь быть такой.

Այն երեխան, որ մնում է վերջում, դառնում է *ցար*, այսինքն՝ թագավոր (ենթադրաբար՝ Վլադիմիր Պուտինը կամ Նիկոլ Փաշինյանը): Բոլորը կանգնում են կիսաշրջանաձև, փակ աչքերով՝ երկու ձեռքով բռունցք արած և մեկնած դեպի ցարը: Ցարը կանգնած է նրանց դիմաց և ում ցանկանում է՝ փոխանցում է փոքրիկ քար (իբրև ռումբ): Այդ ընթացքում բոլորի ձեռքերին հերթով դիպչում է, որպեսզի խաղացողները չկարողանան կռահել, թե ում ձեռքի մեջ է պահ տալու «ռումբը»:

Դրանից հետո ցարը հայտարարում է. «Операция…»: Բոլորը խառնվում են իրար, բացում են աչքերը և փորձում հասկանալ, թե ո՞վ է ահաբեկիչը, որ հարձակվեն և վնասազերծեն, ծեծեն: Ահաբեկիչն իր հերթին պետք է աշխատի աննկատ ու հմտորեն խույս տա մյուս խաղացողներից՝ ուղղվելով դեպի նախապես սահմանագծված վայրը՝ *կայարանը*, քարը նետի և ավարտի ցարի կիսատ թողած միտքը՝ հայտարարելով «....бум»: Եթե այդ ամենը նրան հաջողվում է, ապա խումբը շրջվում և փորձում է հաշվեհարդար տեսնել ցարի հետ: Այդ ընթացքում ցարը պետք է վազի և ձեռք-ձեռքի տա ահաբեկչի հետ: Եթե չի հասցնում, խաղացողները նրան են սկսում ծեծել և գահընկեց անել: Այդ դեպքում նորից կատարվում է հաշվերգը, և ընտրվում է նոր ցար: Եթե ցարը, այնուամենայնիվ, հաջողացնում և հասնում է ահաբեկչին՝ առանց որևէ մեկից բռնվելու, վերսկսում է խաղը՝ մնալով որպես ցար:

Ուշագրավ է, որ ռուսերեն տեքստով հաշվերգը մեր աշխատանքի ընթացքում կատարում էին հենց հայ երեխաները: Տվյալ հաշվերգը կատարում են միայն այս խաղի ժամանակ[12]: Խաղը կատարվում է ՀՀ-ում՝ գյուղական միջա-

12 Մեր դաշտային աշխատանքներից հայտնի է այլ տարբերակ ևս, որը կիրառում են տարբեր խաղեր սկսելուց առաջ՝
Белка прыгала, скакала,
И на ветку не попала,
А попала в царский дом,
Где сидели за столом:
Царь, царевич,
Король, королевич,
Сапожник, портной,
Кем ты хочешь быть такой?
(Բանասաց՝ Բաբայան Վիկա Վարդգեսի, ծնվ. 2006 թ. Երևանում, գրի ենք առել 2013 թ. Նոր Նորք վարչական շրջանում:

վայրում, բայց վտանգավոր իրադարձությունների կիզակետում «ցարական» Ռուսաստանն է՝ Մոսկովյան Կարմիր հրապարակը, կայարանը:

Որպես քննարկում

Մեր դաշտային աշխատանքների ընթացքում (2009-2018, 2022-2023 թթ.) այդքան բաց տեքստով քաղաքական բնույթի խաղ դեռևս չի հանդիպել: Հավանաբար սա ևս կապված է աշխարհում երեխաների պաշտպանությանը միտված միջազգային բազմաթիվ միջոցառումներին, որոնցում այնքան են բարձրացված երեխայի պաշտպանությանն ուղղված հիմնախնդիրները, երեխայի դերը, որ հենց երեխան է դարձել աշխարհաքաղաքական ուղեծրի առանցքային կրողն ու ներկայացուցիչը իր ժամանակավոր՝ խաղային աշխարհում: Եւ հենց երեխան է մերօրյա իրականության «ապրողն ու խաղարկողը»:

Ազգագրական դիտարկումների տեսանկյունից նայելիս՝ միանգամայն բնական ենք համարում միջմշակութային այդաստիճան սերտաճումները: Խաղի մեջ ցարի կերպարը տեղայնացվում ու դառնում է Նիկոլ՝ Պուտինի փոխարեն, երբ խաղացողներն ավելի շատ հայ երեխաներն են, կամ էլ՝ պարզապես այդպես են ցանկանում:

Այս խաղը կերպարային բնույթի է, ունի խիստ շարժուն կառուցվածք՝ խաղացողների սեռատարիքային առանձնահատկություններին բնորոշ: Բայց այստեղ հարկ է շեշտել ոչ թե խաղի բնութագրիչները, այլ խաղի սուբյեկտը՝ խաղացողներին:

Հ. Գադամերը, սակայն, պնդում է հակառակը՝ թե խաղի սուբյեկտը հենց ինքը խաղն է կամ խաղացողի և խաղի առարկայական կազմի (այլ խաղացողներ, առարկաներ) փոխհարաբերությունը[13]: Մեզ համար կենտրոնականը խաղացողն է՝ իր ֆիզիկական հնարավորություններով և մտավոր կարողություններով: Այս խաղում, մասնավորաբար, խաղացողներն են կերտել իրենց խաղի փիլիսոփայությունը՝ առանց պատահականությունների: Մի կողմից՝ մենք գիտենք, որ խաղը չունի տրամաբանություն, քանի որ տրամաբանության մեջ չկան պատահականություններ, և խաղը միշտ ենթակա է պատահականության սկզբունքին, մյուս կողմից էլ խաղացողներն իրենք գիտեն, թե ինչու՛ և ինչպե՛ս են խաղում:

Կարծում ենք, որ սա այնպիսի փուլ է հայ սոցիալ-մշակութային կյանքում, որ ներազդված շատ երևույթներ դեռևս կկենցաղավարեն, սակայն կենսունակ լինել չեն կարող: Ժամանակի ընթացքում դրանց բնույթից շատ տարրեր կմոռացվեն կամ էլ դառնալով ոչ արդիական՝ իրենց տեղը կզիջեն կա՛մ առավել նախնական տարբերակների, կա՛մ որոշակի ձևափոխումներով կպահպանվեն այն տեղավայրերում, որտեղ ավելի շատ է եղել ռուսների ներգաղթ:

Մյուս կողմից, սակայն, հանրային կյանքում մշակութային նման փոխխությունները կամ «անցումային մշակույթը» կարող են պահպանվել բավական երկար, քանի որ ավանդական մշակույթը, որքան էլ սահմաններ է դնում

13 Հմմտ. Гадамер 1988, 148, 152:

կենսակերպի և մարդկանց մտածողության փոփոխությունների վրա, միևնույն է՝ դրա արդյունքը կենցաղային կայունությունն է:

Այս գործընթացը կարելի է բնութագրել որպես սոցիալական ավանդույթի ուժ կամ անհատի անձնական և հանրային կյանքում ավանդույթների արմատացման մեխանիզմներ, որոնք բխում են հանրային կյանքում արդեն ձևավորված սոցիալական փորձից՝ որպես սերունդներին էթնոսի ինքնապաշտպանական մեխանիզմների փոխանցում[14]: Ա. Նալչաջյանն այդ փորձը համարում է սոցիալ-հոգեբանական կարևորագույն երևույթ, իսկ հանրային կարծիքն ու նորմերը՝ անհատի վարքի արտաքին կարգավորումներ, որոնք կապված են ազգի հոգեբանական առանձնահատկություններին՝ ավանդույթների վարքային բաղադրիչների հարմարվողականությամբ[15]:

Ամփոփում

Հայաստանյան իրականության մեջ սոցիալ-քաղաքական կամ սոցիալ-հոգեբանական վարքային նորմերն այսօր ունեն արդեն ձևավորված հանրային-քաղաքական հնչեղություն՝ աշխարհաքաղաքական զարգացումներին համահունչ:

Մանկական բանահյուսությունն աշխարհայնացված է նույնքան, որքան հանրային կյանքը: Ժողովրդական խաղերի հումորային-զվարճական բնույթը բխում է սոցիալ-քաղաքական ազդակներից: Մանկական բանավոր ժառանգության զարգացմանը նպաստող գործոններից են՝ հանրային կյանքի համընդհանուր փոփոխությունները, հանրահայտ մարդկանց կյանքից միջադեպերը, կրոնական և քաղաքական «առցանց պատերազմները» ևն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԼՉԱՋՅԱՆ 2004
Նալչաջյան Ա.Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2004, «Զանգակ-97», 432 էջ:

ՇԱԲՈՒՆՑ 2011
Շաբունց Լ., Գլոբալացման և պետական ինքնիշխանության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում // Բանբեր Երևանի Համալսարանի. միջազգային հարաբերություններ. քաղաքագիտություն, 2011, 135-6, 73-79:

ГАДАМЕР 1988
Гадамер Х.-Г., Истина и метод (основы философской герменевтики), Москва, «Прогресс», 1988, 637 с.

ИВАНОВ 2004
Иванов Н.П., Человеческий капитал и глобализация // Мировая экономика и международные отношения, 2004, № 9, 19-31.

Ներկայացվել է՝ 19.01.2024
գրախոսվել է՝ 16.08.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

14 Հմմտ.Նալչաջյան 2004, 120:

15 Նալչաջյան 2004, 122-123:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6